ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՎԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԲԵՐ ԹԵՄԵՐՈՒՄ

Մայիսի 27-ին, ավարտելով քառասնօրյա պահեցողության շրջանը Մայր Աթոռում, 12 նորաօծ եկեղեցականներ իրենց անդրանիկ Ս. Պատարագը մատուցեցին Հայաստանի տարբեր եկեղեցիներում: Նրանք քահանայական ձեռնադրություն էին ստացել ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի:

Պատարագից հետո նորընծաներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայրական իր հորդորն ու պատգամը փոխանցելով եկեղեցականներին՝ ամուր հավատքով և անսակարկ նվիրումով իրենց ծառայությունը բերելու բարեպաշտ ժողովրդին և Հայ Եկեղեցուն:

Հայրապետական տնօրինությամբ տասներկու եկեղեցականները ծառայության կոչվեցին Մայր Աթոռի տարբեր կառույցներում և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում: Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը, Տ. Արամ քհն. Միրզոյանը և Տ. Սիփան քհն. Գրիգորյանը նշանակվեցին Մայր Աթոռի տարբեր կառույցներում: Տ. Հովել քհն. Օհանյանը հովվական ծառայության կոչվեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմում, Տ. Առաքել քհն. Ամիրյանը՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Մանուկ քհն. Զեյնալյանը և Տ. Արմաշ քհն. Պողոսյանը՝ Վիրահայոց թեմում, Տ. Եփրեմ քհն. Հարությունյանը՝ Արարատյան Հայրապետական թեմում, Տ. Սողոմոն քհն. Մինասյանը՝ Շիրակի թեմում, Տ. Ժիրայր քհն. Խաչատրյանը՝ Կոտայքի թեմում, Տ. Վիգեն քհն. Մանուկյանը՝ Արագածոտնի թեմում:

Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը Նորին Սրբության տնօրինությամբ կմեկնի Իսպանիա՝ շարունակելու իր ուսումնառությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ